

# Հարցազրոյց՝ Կիպրոսի խորհրդարանի անդամ Sopb. Վահագն Ադամեանի հետ

Հարցազրոյցը վարեց՝ ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ

- 1 -

ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ. Խմբագրատանս մէջ հաճոյքն ունեցանք ընդունելու Կիպրոսի խորհրդարանի անդամ, սրտի հիւանդութիւններու մասնագէտ Տոբթ. Վահագն Ադամեանը, ընկերակցութեամբ Զօհրայ Շամմասեանի և Ռաֆֆի Զինգալեանի: Զերմ ու մարդասօտ անձնաւորութիւն մըն է ան. կարծես քսան տարուան ծանօթներ ըլլալից: Առաջին իսկ վայրկեանէն, այդ տպաւորութիւնը ստացանք: Տօբթօր, խնդրեմ, մեզի բացատրեցէք, թէ ի՞նչ պատճառով կամ առիթով կը գտնուիք Լոս Անճելըս:

ՏՕԲԹ. ՎԱՀԱԳՆ ԱԴԱՄԵԱՆ. Ուրեմն, առաջին այցելութիւնս է Ամերիկայի Միացեալ Նահանգներ և Լոս Անճելըս: Հոս եկած եմ, որպէսզի ամէն ճիգ թափեմ՝ թէ ինչպէ՞ս կրնանք Մեղզոնեան Կրթական Հաստատութիւնը փրկել: Ինչպէս գիտէք, Մեղզոնեան Կրթական Հաստատութիւնը այս վայրկեանիս Կիպրոսի և ամբողջ Սփիւռքի միակ գիշերօթիկ վարժարանն է — էր, դժբախտաբար — որ այս վայրկեանիս գոց է: Ուրեմն, պիտի աշխատինք, որ Պատրիարքարանի, Ասնուցի և ՀԲԸՄ-ի միջեւ, եթէ կրնանք, քաղաքական յուժում մը գտնել: Ինչպէս գիտէք, արդէն իսկ դատական Հարցը ընթացքի մէջ է, և մենք պէտք է option մըն ալ ունենանք քաղաքական գետնի վրայ, որպէսզի կարենանք Մեղզոնեանի Հարցը լուծել:

ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ. Դատ որ կ'ըսէք, խնդրեմ, բացատրեցէք մեզի, ի՞նչպէս կրնաք տիրոջ մը դէմ դատ բանալ:

ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ. Off the record ըսեմ, որ ես պիտի չուզէի դատական ընթացքի մէջ եղող Հարցի մը մասին որեւէ բան ըսել: Որովհետեւ, արդէն իսկ իրականութիւն մըն է և, ինչպէս ըսի, դատաւարութիւնը ընթացքի մէջ է: Ատոր համար ալ, ոչ ես բացած եմ դատը և ոչ ալ ես պիտի որոշեմ դատին ելքը: Այնպէս

- 2 -

որ, պիտի չուզէի որ իմ դիրքս դատին մէջ ընդգրկուի: Պիտի նախընտրեմ քաղաքական յուժում տայ այս Հարցին:

ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ. Բայց դատը քաց է, չէ՞:

ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ. Այո:  
ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ. Լաւ, մեզի բացատրեցէք թէ ի՞նչպէս սկսաւ՝ առանց մանրամասնութեանց մէջ մտնելու:

ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ. Ուրեմն, երկու տեղ դատի մէջ ենք. առաջինը հոս՝ Los Angeles Superior Court-ի մէջ, Պոլսոյ Պատրիարքին կողմէ: Ինչպէս գիտեմք, Պոլսոյ Հայոց Պատրիարքը Օսմանեան Պետութեան կողմէ Մեղզոնեան կտակին original կտակակատարը կարգուած էր: Օսմանեան Պետութեան իշխանութեան փոխանցման ատեն, Բարեգործականէն խնդրեցին, որ ստանձնէ անոր Հոգատարութիւնը, բայց չի նշանակեր որ Բարեգործականին կը պատկանի: Բարեգործականը, այս պարագային, միմիայն Հոգատարն է կտակին: Այնպէս որ, անցեալ Յունուարի 12-ին դատը յանձնուեցաւ Los Angeles Superior Court-ին, Ապրիլին՝ Dismiss եղաւ (մերժուեցաւ). մենք appeal (վերանայում) քրած ենք: Հաւանաբար, մինչեւ 2006-ի Դեկտեմբերը դատը պիտի վերջանայ: այսինքն, երեք դատաւոր պիտի դատեն, որոնք դատի պիտի կանչեն երկու կողմի փաստաբանները և պիտի ջանան լուծման մը յանգիլ: Ուրեմն, այստեղի դատը՝ այս է: Իսկ Կիպրոսի մէջ երկու injunction (վճռագիր) ունինք Կիպրոսի յոյն փաստաբաններուն կողմէ, Բարեգործականի դէմ: Առաջին injunction-ը նոյն Հարցին կապակցութեամբ, իսկ երկրորդը՝ Բարեգործականը Մեղզոնեանի մէջ office building-ներ ունի, որոնց վարձքերը կը հաւաքուին և նիւ Եորք՝ Բարեգործականին կը դրկուին: Այդ դատին նպատակը այն է, որ այդ գումարները

ստուեցուին, սրնչու որ դատը վերջանայ և անկէ  
ետք տրուին անոր, որուն ի նպաստ վճիռ  
տրուած է:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ.** Լաւ, քայց Los Angeles Superior Court-ը ի՞նչպէս կրնայ իր վճիռը  
Կիպրոսի մէջ պարտադրել:

**ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ.** Ուրեմն, դատարանը  
որոշեց որ Superior Court-ի մէջ պիտի ըլլայ  
ասիկա. և քանի որ Բարեգործականը Նիւ Եորքի  
մէջ իր գրասենեակը ունի և Լոս Անձելըսի  
մէջ ալ, Փաստօրէնա, իր Կեդրոնը Mountain-ի  
վրայ, և Մարի Մանուկեան դպրոցը, ուրեմն  
դատարանը որոշած է որ Հոս ի գորու է, փոխանակ  
Նիւ Եորք երթալու:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ.** Լաւ, Տօթոր, խօսի՞նք  
Ձեր ընտրութեան մասին: Որքան գիտեմ,  
մասնակի ընտրութիւն էր Ձերը, քանի  
Գալայձեանը մահացաւ և դուք ընտրուեցաք  
իր փոխարէն: Զանի՞ թեկնածուներ կային և  
բուլէներու ի՞նչ համեմատութեամբ դուք  
ընտրուեցաք:

**ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ.** Երեք Հոգի թեկնածու  
էին: Կիպրոսի 3000 Հայերէն 1900-ը քուէարկե-  
լու իրատունը ունէին, որոնց 1600-ը մասնակ-  
ցեցաւ և ևս ձայներու 52%-ով ընտրուեցայ: Միւս  
երկու թեկնածուներէն մէկը ստացաւ 44%-ը,  
իսկ միւսը՝ 4%-ը:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ.** Մէ՞կ հայ կայ  
Կիպրոսի խորհրդարանին մէջ:

**ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ.** Այո, մէկ Հայ: Կիպ-  
րոսի երեք փոքրամասնութիւնները՝ մարոնիթ,  
լատին և Հայ, մէկական ներկայացուցիչ ունին  
խորհրդարանին մէջ:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ.** Լաւ, ի՞նչպէս  
կը գգնաք դուք Ձեզ, որպէս երեսփոխա՞ն, որպէս  
քօի՞չկ...

**ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ.** Ծատ դժուար Հարցում  
է ատիկա, քայց արդէն տասնեակ տարիներէ ի  
վեր ծառայած եմ գաղութին և կրցած եմ ամուս-  
նացնել թէ՛ բժշկութիւնը, թէ՛ աղգային գործե-  
րը և թէ՛ երեսփոխանի աշխատանքները: 14  
տարի Մելգոնեանի Հորազարձութեան մէջ եղա  
եմ, 17 տարի՝ Նարեկի Հոգաբարձութեան մէջ:  
Նարեկը մեր երեք նախակրթարաններն են.  
ուրեմն, ուզեցի որ որպէս երեսփոխան ալ օգ-  
տակար ըլլամ մեր գաղութին: Անշուշտ, բժըշ-  
կութիւնը չես կրնար մոռնայ: 16-17 տարի  
սիրայօժար կերպով բժշկութիւն ըրած եմ  
Մելգոնեանի, նաեւ Գալայձեան Հանգստեան  
Տան, ուր մեր երէցները կը մնան:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ.** Յարգուած գա-  
ղութ մըն եմք Կիպրոսի մէջ, չէ՞:

**ՏՕԲԹ. ԱԴԱՄԵԱՆ.** Թէ՛ յարգուած և թէ՛  
սիրուած ենք: Կիպրոսի Հայ գաղութի մակար-  
դակը շատ բարձր է. շատ զօրաւոր գաղութ  
մըն ենք, առողջ, Հայախօս: Ունինք երեք դըպ-  
րոցներ, երեք քաղաքներու մէջ՝ Լաոնաքա,  
Նիկոսիա և Լիմասոլ: Ունինք 125 աշակերտ: Մեր  
դպրոցներուն բոլոր ծախսերը կը Հոգայ կառա-  
վարութիւնը: Ուրեմն, Հայ գաղութը շատ բախ-  
տաւոր և ուրախ պէտք է դգայ, որ կ'ապրի  
այնպիսի երկրի մը մէջ որ Հայասէր և բարե-  
խնամ է: Անշուշտ, պէտք է գիտնաք որ Կիպ-  
րոսի խորհրդարանը առաջինն էր աշխարհի  
մէջ, որ ճանչցաւ Հայկական Յեղասպանութիւ-  
նը:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ.** Լաւ, հիմա վե-  
րագառնանք դատին, և հարցումս քեզի է,  
Ռաֆֆի Զինվալեան: Ենթադրեմք թէ դուք  
շահեցաք դատը, դուք պիտի կարենա՞ք դպրոցը  
լեցնել այդքան աշակերտով որ գոհացուցիչ  
դառնայ: Որովհետեւ շատ լաւ գիտէք որ Ոսիս-  
կին աշակերտ հայթայթող երկիրները՝ Լիբա-  
նանը, Պարսկաստանը նոյն հնարաւ որութիւնը  
չունին:

**ՌԱՖՖԻ ԶԻՆՉԱԼԵԱՆ.** Ասիկա շատ լաւ  
Հարցում մըն է: Այս մասին արդէն խօսած ենք  
Պատրիարքին Հետ: Եթէ դատը չահինք, Պատ-  
րիարքն է որ պիտի որոշէ և շատ Հաւանաբար  
Մելգոնեանի Ծրջանաւարտիցին պիտի յանձնէ,  
և մենք արդէն Հեռաձայններով և E-mail-երով  
Մոնթրէլայ, Կիպրոս, Պէյրութ, Սուրիա, Հա-  
յաստան իրարու Հետ կապի մէջ ենք և արդէն  
յանձնախումբեր կազմուած են որ ի՞նչ պիտի  
ըլլայ, ո՞վ պիտի գայ, որո՞նք պիտի որոշուին,  
ինչե՞ր պիտի ըլլան, այդ աշխատանքները կը  
տարուին: Գայով այն Հարցին, թէ՛ Սփիոթի,  
մասնաւորապէս՝ Միջին Արևելքի և Եւրոպայի  
մէջ Հայութիւն կա՞յ, այո՛ կայ: Արդէն վերջին  
ատեն, երբ Մելգոնեանը զոցուեցաւ, Պուլկա-  
րիայէն մօտ քառասուն ուսանող ուէինք: Ինչ-  
պէս գիտէք, Արևելեան Եւրոպայի երկիրները,  
երբ Համայնավարութեան տակ էին, չէին կրնար  
գայ. Հիմա որ անկայս են, Ռուսներա, Պուլկա-  
րիա, Նոյնիսկ Մակեդոնիա, Եուկոսլաւիա, Լե-  
Հաստան, Հայութիւնը, ճիշդ է որ Հաղարաւոր  
չեն, քայց կայ նկատելի թիւ մը որ կ'ուղեն  
Մելգոնեան գայ: Ռուսիա, ուր մէկ միլիոն  
Հայութիւն կայ, Ռորբանիա, մինչև Ղարաբաղ,  
Սլաւիա, ուր ներկայիս քառասուն Հաղար

Հայութիւն կայ, կրնան աշակերտ Հայթայթիւ: Կիպրոսը քանի որ Եւրոպական Նորհորդին մաս կը կազմէ, Եւրոխորհուրդը պատրաստ է այս աշակերտներուն ծախսը հոգալու: Ասիկա Բարեգործականը շատ լաւ գիտէ: Մենք շատ մը բաներ թերթերուն մէջ չենք արծարծեր, Բարեգործականը վար չենք գարներ, բայց պէտք է յատկ ըլլայ, որ Բարեգործականը այս որոշումը չառած, իրատես պէտք է ըլլար, իրապաշտ, և որոշէր, որ Հայութիւն կա՞յ թէ ոչ: Ըստ Բարեգործականի, Միջին Արեւելքի մէջ շատ քիչ Հայութիւն մնացած է, բոլոր Հայութիւնը խուճապի մէջ է: Ոչ, Հայութիւն կա՞յ Լիբանանի մէջ, Սուրիոյ մէջ, Պարսկաստանի մէջ, Յունաստանի մէջ: Իրաքէն քառասուն աշակերտ կ'ուղէին զայ Մեյգոնեան, բայց մերժուեցան, քանի որ Մեյգոնեանը գոցուած էր... Այնպէս որ, ուսանող կա՞յ, այո՛, կայ: Քաջալիբանք, յանձնառութիւն եթէ ըլլայ, ուսանողները կու գան: ... Մենք կ'ուղենք որ այս Հարցին լրջութեամբ մօտեցուի և ասոր համար ալ մենք պիտի պայքարինք մինչեւ վերջ:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Կիպրոսի կառավարութիւնը որոշում առաւ, որ Մեյգոնեանը պէտք չէ գոցուի, կ'ուղէ որ Հայկական դպրոց մը ըլլայ Կիպրոսի մէջ և պատրաստ է վճարումներ ալ կատարել Կիպրացի աշակերտներուն համար, ինչպէս նաեւ և եւրոպացի աշակերտներուն համար, քանի որ, ինչպէս Ռաֆֆին ըսաւ, Կիպրոսը անդամ է Եւրոխորհուրդին:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Լաւ, դարձեալ վերադառնալ Կիպրոսի հայութեան: Դպրոցներու մասին խօսեցանք. խօսինք ընդհանուր հայութեան վիճակի, եկեղեցիներու, տարբեր միութիւններու մասին:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Երեք քաղաքներու մէջ անինք երկր եկեղեցիներ. ունինք առաջնորդարան: Առաջնորդը՝ Վարուժան Սրբազան Հերակելեանն է, Անթիպիասէն:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Հոն գաղափարի՝ Հնչակ-Դաշնակ-Ռամկավար ինդիքներ կա՞ն:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Այո՛, կան, և շատ զօրաւոր:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Ո՞վ է գերիշխող կուսակցութիւնը:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Իբրեւ կուսակցութիւն, թէ իբրեւ քուէարկութեան արգիւնք:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Իշխող, գերիշխող: Դպրոց վարող, միութիւններ, մասնաճիւղեր ունեցող, թերթ, եւ այլն:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Երկու թերթ կայ Կիպրոսի մէջ. «Արձագանգ», որ կը պատկանի Դաշնակցութեան, «Ազատ Զայն», որ կը պատկանի Բարեգործականին: Հատ մըն ալ կայ Internet News Paper, որ կիպրահայերունն է:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Մակարայ վանքի վիճակը ինչպէս է:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Լաւ չէ: Ինչպէս գիտէք, թրքական կողմի մէջ է և փառակ վիճակի մէջ: Հիմա, Եւրոպական Միութեան օգնութեամբ քայլեր կ'անենք, որպէսզի վերանորոգուի: Անշուշտ, շատ դժուարութիւններ կան. Կիպրական Հարցը լուծուած չէ, Կիպրոսը երկու մասի բաժնուած է, բայց կ'աշխատինք ճամբաներ գտնել, որ կամաց-կամաց լուծենք այս Հարցը: Գալով թրքական գօտիին մէջ գտնուող կայտածներուն, անոնք կը մնան գրաւուած. վստահ եմ որ ոմանց վրայ շինութիւններ կ'ըլլան: Ինչպէս ըսի, եկեղեցին փլատակ վիճակի մէջ է, բայց ուրախ եմ բնելու որ UNICEF-ը միջամտած է և կը յուսանք որ այդ ուղղութեամբ յատուկ կարգադրութիւն մը կ'ըլլայ: Ունինք Կիպրոսի Հայկական ռատիօժամբ, մէկ ժամ, Շաբաթ օրերը, որոն վարիչներն են Սևախը և Վարդան Թաշճեանի կինը՝ Միլվան:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Տօթոր, վերջին խօսք մը ունի՞ք:

**ՏՕԲԹ. ԱԳԱՄԵԱՆ** — Անձնապէս Ձեզի պիտի ուղէի ըսել, որ ընտանեօր և գերդաստանով մենք մեյգոնեանցիներ ենք, մեծ մամայիս կողմէ, մինչեւ զաւակներս: Բոլորս ալ Մեյգոնեանէն անցած ենք: Վստահարար, չենք ուղեր որ Մեյգոնեանը գոցուի: Միւս կողմէն, Բարեգործականի վեթերան անդամ եմ ես, հոգ չէ թէ տարիքս շատ մեծ է, և միշտ Բարեգործականի համար աշխատած եմ, և մինչեւ հիմա կ'աշխատիմ: Պիտի ուղէի որ Բարեգործականը, այս մէկ սխալով չքանդէր այն բոլոր լաւ գործերը, որ ըրած է մինչեւ այսօր, և վստահ եմ, որ պիտի շարունակէ ընել: Այս սխալ մտածումը, որ եղած է Մեյգոնեանի նկատմամբ, կը կարծեմ որ պէտք է փոխուի, որպէսզի դպրոցը կարենայ շարունակել:

**ՎԱՀԱՆ ՎԱՀԱՆԵԱՆ** — Եղաւ, Տօթոր, շնորհակալութիւն:

Գրի առաւ՝ ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ